Հովհաննես Թումանյան

Հոգեհան

(Լեգենդա)

Փոցխովի ձորում ծաղկում էր Շամոն,
Կուսական գարուն ու սեր շընչելով,
Փոցխովի ձորում թոշնում էր Համոն,
Ծաղիկ աղջըկա սիրուց տանջվելով:

Չէ՛, չեմ հավատում իսկի քո սերին,
Դու սուտ ես ասում, դու չես սիրում ինձ…
Ասում էր Շամոն սիրահար տըղին
Ու հեռո՛ւ-հեռու հըրում իրանից:

Ու դարձյալ գընաց տըղան սիրակեզ.

Ո՞ր կըրակն ընկնեմ, Շամո, որ գընթաս.
Սիրտս չեմ կարող, թե հանեմ տեսնես
Ի՞նչ անեմ ուրիշ, որ ինձ հավատաս:

Տեսնո՞ւմ ես, ահա, ասավ աղջիկը,
Ցույց տալով լերան գագաթը ահեղ.

Ինձ դիր քո ուսին, սրրինգրդ փրչիր,
Ու վե՛ր, պարելով՝ տար մինչև այնտեղ:

Երբ որ կրհասնենք էն սարի գրլխին,
Այնժամ կիմանամ, որ սիրում ես ինձ,
Այնտեղ կրլինեմ ես քո սիրուհին,

Ու սիրով կապված կիջնենք այնտեղից:

Ու դրրավ ուսին սիրած աղջրկան,
Սրինգը հրնչեց, ըսկրսեց պարը,
Ճանապարհ ընկավ սիրահար տրղան
Դեպի ամպամած լերան կատարը:

Գրնում է, գրնո՛ւմ սեպ ժայռերն ի վեր,
Ու պար է գալի, և անվերջ ածում.
Դեռ շա՛տ է հեռու… որտե՛ղ ես դու դեռ…
Դու ինձ չես սիրում, դու սուտ ես ասում…

Ծալվում են հոգնած ծրնկները տակին,

Քրրտինքը վազում ճակատից ներքև,
Բերանն է հասել թրոչում է հոգին,
Աչքերը մթնում, շրնչում հևիհև:

Չէ՛, չեմ հավատում ես դեռ քո սերին,
Դեռ շատ է հեռու գագաթը լերան…

Ասում է Շամոն նրստած ուսերին,
Ճրգնում է նորից ուժասպառ տրղան:

Արդեն ամպերի տակին է պարում:

Մոտիկ է արդեն գագաթը ձյունոտ,
Վերջին ուժերը հավաքում, լարում,

Դարձյալ մի պըտույտ, դարձյալ մի ոլորտ…

Մի քիչ էլ… քիչ էլ… վերջապես հասավ,
Վայր դըրավ ուսից սարի կատարին.
Հոգիս հանեցիր, օ՜ֆ Շամո… ասավ,
Ասավ ու ընկավ սըրինգը ձեռին:

Այժմ քո սերին հավատում եմ ես,
Այս ժամից ահա քոնն եմ հավիտյան,
Ճըչաց աղջիկը, գըրկեց վերջապես,
Գըրկեց Համոյի… դիակն անկենդան:

Այժըմ էլ ժեռուտ սարի գագաթին

Դեռ ցույց են տալի մի հին գերեզման,
Պատմում, ափսոսում անբախտ իգիթին,
Ու սարի անունն ասում Հոգեհան…

1901